

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Նոյեմբերի 30-ին Սինոդը հրամայեց նախ՝ կարգել Մակար եպիսկոպոս Բարխուդարեանին ս. Թովմայ Առաքելոյ վանուց վանահայր՝ նշանակելով նրան ռոճիկ ամսական վաթսուն ռուբլի իւր պաշտօնավայրն հասնելու օրից, որի մասին հրաման տալ Երևանի Կոնսիստորիային։ Երկրորդ՝ կարգել Ղուկաս վարդապետ Եղիազարեանցին վանահայր Խոր-Վիրապի, պատուիրելով Երևանի Կոնսիստորիային կանչել ատեան նախկին վանահայր Անտոն վարդապետին և ստանալով նրանից Խոր-Վիրապ վանքի բոլոր հաշիւները, յանձնել նոր վանահօր, նշանակելով նրան դեկտեմբերի մէկից մինչև առաջիկայ ապրելի 1-ը 30 ռ. ամսական, եթէ վանքում ապրուստի որ և է միջոցներ չկան, իսկ Գրիգորիս վարդապետին թողնել ս. Գայանէի վանահայր մինչև Նորին սրբութեան տնօրինութիւնը։

Դեկտեմբերի 2-ին Սինոդը թոյլ տուաւ ընդունել հայոց եկեղեցու ծոցը քրդուհի Համալի Սաֆօ ղղուն, որի մասին հրաման տուաւ Երևանի Կոնսիստորիային։

Դեկտեմբերի 5-ին Սինոդը որոշեց մատուցանել հանդուցեալ Արսէն քահանայ Մանդակունու կտակի պատճէնը Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին և պատ-

ուիրել Բեսսարաբիոյ թեմական Առաջնորդին ուղարկել յիշեալ կտակի պատճէնները Կիլիկիոյ ս. Կաթողիկոսին և Պոլսոյ ու Երուսաղէմի պատրիարքներին։

Դեկտեմբերի 7-ին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևորականութեան մէջ Աստապատ գիւղի բնակիչ Արտաշէս Գաբրիէլեան Աբեղեանցին նոյն գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու նպատակաւ։

Դեկտեմբերի 12-ին Սինոդը որոշեց հրամայել Վրաստանի և Իմերէթի վիճ. Կոնսիստորիային դատ բանալ հանգուցեալ Աղէքսանդր Թայիրեանի ժառանգների դէմ՝ նրանցից ստանալու հանգուցեալի Սևանայ վանքի օգտին կտակած 3500 ռուբլին։ Բացի դրանից պահանջել, որ Կոնսիստորիան յայտնի Սինոդին, թէ արդեօք ստացուած է հանգուցեալի յօգուտ Ներսիսեան դպրանոցի և Թիֆլիզի ս. Աստուածածնայ եկեղեցու կտակած անշարժ գոյքը։

Դեկտեմբերի 16-ին Սինոդը որոշեց. որովհետև նախկին եկեղեցական ծխական դպրոցների գոյքն արդէն վերադարձնում են համաձայն Բարձրագոյն հրամանի, ուստի խնդրել Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուից՝ կարգադրել, որ վերադարձուի 51,343 ռ. 63 կ. հանգուցեալ Արղութեանի կտակած գումարը յօգուտ Աղէքսանդրապոլի օրիորդաց դպրոցի՝ կտակի մտքի համամաձայն գործադրելու։

Նոյն թուին Սինոդը հրամայեց տպարանական Վարչութեան այսուհետև բոլոր գրքերի, «Արարատի» և մատեանների ցուցակները ուղարկել Սինոդ ստացողներից նրանց արժէքը պահանջելու ստորագրեալ հաստատութեանց միջոցաւ և հաշիւները Սինոդում պահելու։

Նոյն թուին Սինոդը լուծեց շահրիարցի Մարիամ Ցարութիւնեանի և Նաւասարդ Մկրտչեանի ամուսնու-

թիւնը և իրաւունք տուաւ Նաւասարդին նորէն ամուսնանալու։

Դեկտեմբերի 19-ին Սինոդը որոշեց յանձնել Մայր Աթոռի թանդարանապետի պաշտօնը մատենադարանապետ Մեսրոպ վարդապետին, իսկ տպարանի պատասխանատուի պաշտօնը տ. Մխիթար վարդապետին։

Նոյն թուին Սինոդը լուծեց Ենգիջա գիւղի բնակիչ Կիրակոս Դաւթեանի և Վարդեր Յարութիւնեանի ամուսնութիւնը և իրաւունք տուաւ կնոջը նորից ամուսնանալու։

Դեկտեմբերի 13-ին Ստեփան Խիթարեանի և Սոֆիա Միքայէլեանի պսակը Ստեփանի անհաւատարմութեան պատճառով և իրաւունք տուաւ Սոֆիային նորէն ամուսնանալու, որի մասին հրաման տուաւ Վրաստանի և Իմերէթի վեհ. Կոնսիստորիային։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց ընդունել հոգևորականութեան մէջ Աղէքսանդրապոլի բնակիչ Մկրտիչ Կարապետեանին և կարգել սպասաւոր ս. Փրկիչ եկեղեցու։



Պատճէն

Ի 12 դեկտ. 1905 ամի ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդի սրբոյ Էջմիածնի լուսան զեկուցումն վասն բարեզգեցոյ զինդիր ձեռնադրութեան քահանայից, որպէս նկատմամբ կանոնաւորութեան ընտրութեան նոցա, նոյնպէս և չափու արժանաւորութեան ընծայացուցաց և անհրաժեշտութեան ձեռնադրութեան նոցա, Սինոդս մշակեալ է զծրագիր կանոնաց. վասն որոյ կարևոր տեսանի ունել զկարծիս նմանապէս և ստորագրեալ հոգևոր պաշտօնէից և աշխարհական անձանց, ուստի Հրամայեցին. զպատճէնս ծրագրի կանոնացն յղելով առ թեմական առաջնորդս Հայոց՝ առաջադրել նախ՝ տնօրինել կազմել ի թեմս զժողովս՝ ընդ նախագահութեամբ փոխանորդաց վիճակաց, յանդամոց ստորագրեալ հոգևոր կառավարութեանց, ի ձեռնհաս քահանայից և յաշխարհականաց և ընդ նախագահութեամբ վարդապետ գործակալաց և ձեռնհաս քահանայից և աշխարհականաց, վասն քննելոյ զծրագիրն և յայտնելոյ զայնմանէ զգրաւոր կարծիս, և երկրորդ՝ ընկալեալ առաջնորդի զարձանագրութիւնս ամենայն այդոցիկ ժողովոց՝ կազմել զժողով ընդ նախագահութեամբ իւրով, յանդամոց Կոնսիստորիայի և յայլ ձեռնհաս քահանայից և նմանապէս ի գիտակ աշխարհական անձանց, յորում ժողովի ունելով առաջի աչաց զկարծիս ժողովոց՝ կազմելոց ընդ նախագահութեամբ փոխանորդաց և գործակալ վարդապետաց՝ յայտնել գրաւոր զտեղեկութիւնս վասն ծրագրին և ապա զարձանագրութիւնս ամենայն այդոցիկ ժողովոց փութալ մատուցանել Սինոդիս հանդերձ եզրակացութեամբ իւրով յընթացս երից ամսոց յօրէ ընդունելոյ զհրամանս։ Զպատճէն օրագրոյս և զծրագիրն տալ տպագրել «Այրարատ» ամսագրոյ։

Ընդ բնագրին համեմատ է. Ա. Պ. Դորժավարի՝ Մ. Տէր Անտոնեան